Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յունիսի 20-ին. Թիֆլիս №25



ՄԵՐ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԻՆՏԷԼԼԻԳԵՆՑԻԱՆ ՆԵՐԿԱՅ ՕՐԵՐՈՒՄ.



—Ի՞նչ, հուղիմ քու գլուխն էլ. ձէնդ կտրէ, թէ չէ.

—Թէ չէ ի՞նչ կօնիս։

—Աչքդ կու հանիմ, էս սահաթիս Վանքը կե-նամ, Հոքեւոր Տէրեմէն բաժնուելու հրամանք կու վի-կալնիմ։

—Վուանց կանաս, բա է ու դարդուլ չիմ։

—Քիզ ով է հարցնում, տօ բեդասլ, թէկի Հայ-րիկը հրամանք էր անում. մէ օր փակում էր, մէկէլ օրը բաժնում, խժում էլի բարչեցնում։

—Էտ քու ասածը Հայրիկն էր, հիմիկւայ Կաթ-ողիկոսը էանց բանիր չի անիլ տայ։

ԼԻՍԻՑԵԱՆ ՍՏԵՓԱՆԸ



Չափ-չոփ, չոփ-չափ,
Ստեփանն է, Ստեփանը.
Տկլորել է անպիտանը.
Նիւթ չի գտել իր տանը.
Որ ուղարկէ տպարանը.
Այս է տպել մեր Ստեփանը.
(Տե՛ս «Հասկեր» № 5—9.)

## ՌՈՃԻԿՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ



Մեր ուսուցիչներից շատերը ստիպուած են Սուդեբնի պրիստաւների միջոցով առնել իրենց հասանելիք ռոճիկները պարոն և ազա հոգաբարձուներից. առ այժմ Ալէքսանդրապոլի Թրիմեան և Գորիսի դպրոցների ուսուցիչները այդպէս են վարւել, յոյս կայ այս սովորութիւնը շուտով տարածւի և միւս դպրոցներում։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է

4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 р. | Դուրսը և Արտասահման 5 р.
Կէս տարւանը » » » » 2 р. 50 | Կէս տարւանը » » 3 р.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 3 րուբլի, իսկ նաղդ՝ 2 р. 50 կ.

Մեր կիսամեայ բաժանորդներից խնդրում ենք բաժանորդագինը շուտով ուղարկել, որպէս զի յուլիսի 1-ից թերթը կանոնաւոր հասցնենք իրենց։

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդւածներ, ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրոնիկ, արտաքին տեսութիւն, առեւտրա-արդիւնաբերական բաժին (բորսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բորսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). թատրոն և գեղարւեստ, մատենախօսութիւն, զաւեշտական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և տեղեկատու։

**ՄԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Օրաթերթը հրատարակւելու է յուլիսի 1-ից (եւր. տարւայ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը 4 րուբլի, 3 ամիսը 2 р. 50 կ. ամիսը 1 р.։ Արտասահմանի համար մինչև տարւայ վերջը 6 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»

Խմբագիր-հրատ. Աստ. Երիցեան.
Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ


## ՄԻՐ ԳԱՀԱՆԱՆԻՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ

Վեհափառ կաթղիկուսին, էս ամսի 16-ին, սուտեհան սահաթի տասին, ներկայացան քախկի հայ տէրտէր-էրեցները ու էլի ուրիշ տեղերի գահանէքը, չէր էպիսկոպոզ Սաթունովը, իժում էլ իրենք, մէ մէ ուղերց են տուում. թէ ինչ է էն կարթացածն, որա մէչ էրեւում էր, վուր մենակ մեր Վրաստանի ու Իմերէթի վիճակում մէ կօնսիստուր կայ, 3 հոգեւոր կառավարութին, 16 գործակալութին, 6 վանահէր-վարժապետ, 8 խէչ, 7 վանք, 369 ժամ ու 336 տէրտէր, 82 շկօլ, 122 ուչիտել 107 ուչիտելնիցա, 8572 աշկերտ աղա-ախչիկ, ու տարեկան՝ տասնուհինգ հազար վացուն թումանէրկու մանէթ, ու տասչուրս շայի խարջ՝ շկօլէքի վրէն։

Իժում մեր էպիսկոպոզ-տէրտէրները գանգատում են թէ՝ «խիստ ծանր է, կօսէ մեր դրութինը, անկանոնութինը, շահասիրութինը, անմխարանութինը, ագխտութինը, անպխտանութինը կօսէ, մեր մէջ դաւէ-դաւ ծուցել է ու մեզ էս օրն է հասցրի, վուր էլ խալխի մէջ անում չունինք ու հիմի կօսէ, ջէր էլի ումիդով ինք Քու վրէն կօսէ. Վեհափառ Տէր, «ձանցի յուսացեալ եմ, եթէ ստկարին փրկելոց եմ օգնականութեամբ աղօթից մերոց».-ու էն խաչը, վուր Դուն վերցրիլ իս կօսէ, խիստ ծանըրն է կօսէ. ու մեզ հարգաւուր է կօսէ, օրէնք, օրէնք ու օրէնք կօսէ. չունքի մինք անօրէնք համ տէրտէրներ ինք դառի. համ գահանութին ինք անում, համ անաստուածութին. ու համ խաչ ու կամիլավկա ինք առացի, վուր մեր գոչումը փէշակ ինք շինի, կօսէ, մեր շկօլէքի վրէն էնդդամ փող ինք ծախսում ու օքում կի չունինք կօսէ, չունքի շկօլէքը շինիլ ինք մեղայ Աստու, մեղայ Իրեն ու Քու առաջ կօսէ... ու բաս խնթրում ինք կօսէ, վուր Դուն կօսէ, Քու Աստուծային փառքով, խելքով ու շնուրքով կօսէ. էս բաներու չարէն անիս կօսէ»։

Մէ վուտը գերեզմանիս հասել է, աշխարքիս խերն էլ իմ տեսի, շառն էլ, գլխիս վերեւ ջրաղացն էլ է բանի, դաւի աղօցը գլխիս իմ բանի, Էնգիգունիս ման իմ էկի՝ Ծղնէթ, Ցխէթ, Ա-ճալա քանի քանի ջէր իմ գնացի, խելօք մարթկերանց հիդ նստիլ խօսիլ իմ, տուտուցնիր էլ շատ իմ տեսի, չուրս կաթղիկոս իմ փոխի, իրիք թագաւուրին հպատակիլ. Դունդուկ-Կարսակով, Շէրեմետով, Գալիցին, Վարանցովին քուչէքով անցկենալիս տեսիլ իմ, գուբերնատորներու հիդ դուրթ է չիմ խօսի, համա նրանց էլ իմ տեսի, եարսուն-քառսուն հայեվար գազեթնիր իմ տեսի, Սաղմոսն ու Աւետարանը, Եփրեմ Խուրի տաւրին ու տէրտէր Տգր-Մինասն էլ իմ կարթացի, Ռաֆի, Պռօշիով, Գամառ Քաթիպան էլ, Վիկտոր Հիւգօ, Տոլստով. Շէքսպիրն էլ

իմ կարթացի ու մեր վերջին ժողովայ երկու գրօշանոց գրքեր-բրօշիւրներն էլ. ու էս թուղթը անտիկա խուսքիր, էս թուղթը մեղայականս՝ իմ օրումը չիմ լսի։

Մաշ Աստուծ օմնէ դրանց, վուր իրենց կինքումը, մէ գամ էլա չին արտում, ու սաում են իրենց ու մեր Հոքեուր Մինձին, էն՝ ինչ վուր պիտին իրենք տանից օչովին խմաց անելու, իրենք իրենց գիգ ու դարման անէին։

Համա խա էն իմ սաում մեր տէրտէրներուն,—հէր օմնածնիր, բա դուք վուր էտ էլ գիդայիք. թէ դարէ դար մնացել է ձէր մէջ ագիդութինը, շաշհատիրութինը, անմիտարանութինը, անկանոնութինը ու էս թուղթը ագիդ քանիրը, էլ վուր օրւայ համա էիք պահում, թթու դնում, թէ հէնց գիդայիք վուր էտ եարաղներով (գործիքներով) ասկը կու փրգիք, հոքներս արքայութենի բաժին կու շինիք։

Ձեր մէջ կան էս սահաթիս մարթիք, վուր ունիվեստետ, ճեմարան, Վանքի շկօլ են աւարտի վուշ բարովկան տէրտէրնիր, վուր իրիք, չուրս, հինգ ու վեց հարիր թուման արթունք ու տոնլուղ են վիկալնում, համա ինչ են անում, ձիգանից վ՞ուր մէկն է Քրիստոսի սուփ ճամփի վրայ կաղնում, Նրա տուած հրամանքով գնում, իր հոտին հէրութին անում, ազքատին օքնում, որփին պահում, հիւանդին խնամում, անուսին ուսում տալի, քաղցածին հաց, ծարաւին ջուր։

Մեր շկօլէքիցը, գիմնազիէքիցը քանի քանի թումաննիր իք վիկալնում. կրօնք ու հաուց լիզւի ուչիալութին անում ու ինչ իք սովրացնում, արա թող ձեր աշկերտներումէն իրէքը դուս գան ու Հայրմիրը սաին անսխալ, ու հայեվար կարենան իրենց անունն ու ասկը գրի։

Ձեզանից, իմ աշկի լուս տէրտէրնիր, վ՞ուր մէկն է, վուր Բարեգործականի, Դրամատիկականի, Լոյսի անթամնիր իք գրած. ձեզանից քանիսն է վուր, տարենը մէ ջէր էլա իրա հարենի, ախկատի, վուրփեերու հալը հարցնի, խորհուրդ ու գիգ սովրեցնի, ու մէ կապէկ ուրշին տուած ըլի։

Մինք, կօսէ, անում ու պատիւ չունինք. ինչ անում կու մնայ, ինչ պատիւ կուլի էնգի, իփ վուր ձիգմէն մինձ փայ տէրտէրութինը, վունց թէ Աստծու շնուրքն ու պատիւն իք ընթունի, ու դարցրիլ իք էդ փէշակ, փէշակ հիշտ ապրելու դասարկապորտ, վունց վուր սաում էր մեր լուսահոքի Արծունովը ու Արիստակէս արփազանըն էլ, հիգը ըննելու համա։

Իշեցէք գեթաղւայ, թէ ով ձիգմէն ու վունց է տէրտէր դառի. քրթամն ու արադը ինչըդա տիգ է բռնի, էտ բանի մէջ։

Բա ձեր կամիլապկէքը, ձեր խաչիրը ձեր խաստափիլոնիրը, դանա չիմ գիդի թուղթերու ու եարաղներու հիգ կուփ իք բռնի մ՞յ, գիդութենի համա գըլխնիրդ մահու իք ածի։

Ցօցիալ չիմ, իմ հոքին գիդենա, խուլիգան էլ չիմ, էն Աստուծ երգինքը, իս խասակ հայ քրիստոնեայ իմ, Լուսաւորչի էգեղեցումը մկրտւած ուսումին ու գիդութենին սիրահար. համա ինչ կօնիք, վուր ձեր գիդութինը, ձեր ճեմարանի, ձեր ունիվերսիտետի, ձեր Վանքի շկօլի ատեստատնիրով, դուք ուփրօ հաւատքից հեռացնում իք խալխին, ձեր մինձաւորութինով, քանց թէ էն հին հին տէրտէրնիրը, վուր իրենց շաքիցն էլ ամանչում էին. Իշեցէք ծիպինի ադա՝ Տէր Օհանէսին, Տէր Թաթէոսին, Տէր Թէբէլին, Սահառունուն ու իս ինչ գիդիմ՝ դրանց պիտնիրուն։

Ու հիմի էլ ուեցացնում իք, մինք էսենց ինք մնացի, «ժանցի յուանայ եմ. եթէ տակարին փրկնրց եմ օգնականութեամբ աղօթից ձևոց»։

Ցուսացէք ինչ կայ, մէ բան վուր փուղ չիք տալի, մուքթա է, մինք էլ դարէ-դար յուս էինք տանում, թէ ձեր աղօտքներով կու փրգւինք, համա չելու, եանդիշ էկանք հեռաքումը։

Աղօտքնիրը չին փրգում. չին ադատում. միգ օտկելու, մեր մէջ ուսում, գիտութին, նամուս, արուս սովրեցնելու համա, հարգաւուր է ինքնաճանաչութին ու ինքնաուղղում, թէկի մարթս էտանց վրայ ուշք չի դարցնի, թէկի դուք փէշակիցը դօշումի չիք անցնի, վունց Կաթղիկոսը կօսէ, վունց ինքը Աստուծը, չունքի անրան ու ծուլերին գեղինը չէ սիրում, դադարկապուրտներին խալխն էլ է ատում մեր էգեղեցին էլ ու մեր Թաքաւուրի օրէնքն էլ։

Դասպար Կոյասաւղեանց

## ՎԵՀԱՓԱՌԻ ՄՈՒՏՔԸ ԹԻՖԼԻԶ

Վեհափառ Կաթողիկոսի մուտքը Թիֆլիզում շնորհիւ կարգադրիչ մասնաժողովի հսկողութեան՝ լաւ էր. կարգապահութիւնը Վեհի գալստեան օրը, թէ կայարանում, թէ Ալէքսանդրեան այգու մօտ, թէ Վանքի դրան և թէ դահլիճում ու վեհարանում կատարեալ էր։

—

Վեհափառի համար վարձել էին, խեղապէս նմանը չտեսնւած փեցաձի կառք. ձիերը ուղղակի հրաշալիք էին, քառատանները եարտ, կարծես հին կօնկից մնացած և հարիւր յիսուննեօթ տարեկան մատղաշներ, կառապանը և տաճնեալում նստած եռերփարոդ ազանիրը յիշեցնում էին Նօյը ամառանց գնացող օմնիբուսների բիձաներին, իրենց կեղտոտ շորերով նոյնիսկ ներքնաշորով, բոկոտն ոտքերով ու մալականի կարտուզներով։

—

Մաղաթեան փողոցով կարգապահ հայ հասարակութիւնը կարգը ի կատարելութեան հասցրեց—Վեհի ամպհովանուց շատ մօտ լսւում էր մինեանց հրող, հայհոյող, ծեծող և ծեծւող հասարակութեան աղաղակները։

—

Տանիքներից, պատշգամբներից, պատուհաններից ծաղիկ ցանող օրիորդների յանդգնութիւնը կատարելութեան էր հասնում, (առանձնապէս Կիւրեղեանի և Մէլլանեանի տներից) Նրանք ծաղիկները փոխանակ Վեհի ոտքերի տակ ածելու, ուղղակի շեշտակի էին անում Վեհի սուրբ անձին, որ բաւական վրդովւում էր հասարակութեանը։

—

Վանքի դուռթի մօտ տուր ու դմփոց սկըսւեց. իսկ գլխաւոր մուտքի մօտ, այնչափ խիստ հրեց հայ կարգապահ հասարակութիւնը, որ Վեհը քիչ մնաց ուշագնաց լինէր, շնորհիւ բժշկապետ Նաւասարդեանի, Կաթողիկոսը ազատ մնաց կոխկրտուելուց։

Վանքի միաբանութիւնը, թէ հոգեւորականութիւնը նորին Վեհափառութեան համար ուղարկել էր մի շատ գեղեցիկ շուրջառ, որի չափրատոնները չէին կարում և որի պատճառով Վեհը խիստ նեղւում էր, որովհետև ճանապարհի ամբողջ ընթացքում, նոյն չափրատոնները կպչում էին, երբեմն Դիտքահանան և երբեմն Աստ. Երիցեանը, վերջը հարկ եղաւ շուրջառը ուղղակի Վեհի վրայից չքացնել, որպէսզի նրան չտանջէին։

—

Նոյն կարգապահ հայ հասարակութիւնը չէր ամաչում ոչ օտարների ներկայութիւնից, ոչ մերայիններից, ոչ Վեհից և ոչ Աստծուց և այնչափ էր դոռում գոչում բարձրացրել Վանքի գաւթում, որ եկեղեցու դռներն էլ կոտրեցին։

Վեհարանում բարձրացող և կարգ ու պատիւ հասկացող հասարակութիւնը տկանտելի եղաւ, ամօթ մեզ, նոյն իսկ նախանդապետի առաջ, տուր ու դմփոցի։

Հայերս կուլտուրական ենք։

## ԹԻՖԼԻԶԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Համբ. Առաքելեանը րոպէում հարիւր անգամ Վեհափառի առանձնասենեակի բանալիի ծակից նայում է ներս և դուռը սրբելով, կրկին յետ նայում։

—

Տէր քահանայ Աղանեանցը օրեկան միայն մէկ անգամ է անցնում վեհարանի մոտով, այն էլ իհարկէ՝ ի պաշտօնէ։

—

Եղնիկ քահանայ Երզնկեանը ուզում է Վանքի գաւթից տեղափոխել ուրիշ տեղ, որովհետև Վեհափառը Օրմանեանին հետը չէ բերած։

—

Պետրոս Սիմոնեանը կենդանացել է, նրան նոյնիսկ պատուհանից տեսնողներ կան։

—

«Գործի» խմբագիրը գիժել է Բարկէն վարդապետին, խնդրելով հոգեհանգիստ կատարել տալ հանգուցեալ «Գործի» և հին ու նոր ննջեցելոց յիշատակին. Բարկէնը մերժել է։ Թաշմալեանը այդ առթիւ ուզում է բողոք ներկայացնել Վեհափառ Կաթողիկոսին։

—

Եփրեմ վարդապետ Սուքիասեանը բոլորովին իրենը չէ, նա ոչ թէ շրջում է, այլ ուղակի թռչում է ու ցատկոտում։

—

Յովհաննէս Սպենդիարեանը շատ գոհ է, որ ինքը թեմական պատգամաւոր չընտրուեցաւ անցեալ տարի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, որովհետև ինքը ըստ ամենայնի համաձայն է Նորին Վեհափառի կարծիքներին։

—

Գարեգին Ենգիբարեանը Բագուից եկել է Թիֆլիզ, Վեհի աջը առնելու և նա այդ ժամանակ ի զարմանս հայկազեան ազգի, առանց «տրուբկա»-ի է ներս մտել դահլիճ։

—

Մէլիք-Բախտամեանը երկու ու կէս արշին աւելացել էր բոյով, բայց այնչափ ճըզմեց կաթողիկոսական ընդունելութեան ժամանակ հայ կարգապահ ամբոխից, որ ուղղակի անիծեց իր կարգադրիչ լինելը։

## Ե Ր Ե Կ

*Աւա՜ղ փառացս անցաւորի*

Ողբում զքեզ, իմ լայն գրպան,
Անցան կեանքիս լաւ օրեր,
Խուեց փառքս, չեմ ինքնիշխան,
Էլ չեմ տեսնի բոլ փողեր...
Սև օյին էր եկաւ գլխիս,
Ա՛յ թէ չըլնէր «կոնդակը»
Կայծակ էր նա, հանեց հոգիս.
Էլ ինչիս պէտք քսակը...

Քանի ձեռքիս իրաւունք կար,
«Բակլէն խաշած ցանեցի».
Գումարս անցաւ քանի՜ հազար.
Ազգականներ պահեցի...
Ձեռքիս տակով անցնող գործեր
Վճռեցի իմ քէֆով.
Առատ նուէր ու պատիւներ
Ես ունէի մեծ թւով...
Դարդ-հոգսերից ես միշտ ազատ.
Ճոխ ու փարթամ ապրեցի,
Սիրուն գրպան, քեզանից բաց
Ամէն մի բան առեցի...
Ես ինչ անեմ, եթէ յանկարծ
Էլ ոչ մի տեղ չընտրուեմ.
Այնուհետև պիտ միշտ չոքած
«Կոնդակ գրողին» անիծեմ։

Ճաւէլ Արաք

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Կիւրակի յունիսի 7-ին կայացաւ Վեհափառին ընդունելու համար պատգամաւորներ ընտրելու ժողովը։

Ներկայ էին երկու սեռից 7000 անձինք։ Նախագահ ընտրեց Տէր-Սահակեան և քարտուղար Տէր-Գրիգորեան, որոնք այդ պատւին արժանանալու համար, շնորհակալութիւն անգամ չը յայտնեցին ժողովին։

Ժողովականների մեծ մասի ցանկութիւնն էր պատգամաւոր ընտրել, բայց երբ Նախագահից իմացան, որ պատգամաւորացուները պէտք է լինեն 1, հաստակով պարթև և գեղեցկադէմ 2, կարողանան Վեհի առաջ միաժամանակ երեք ճառ տալ, 3, որ գլխաւորն է, լաւ ախորժակ ունենան ուտելու, որ ճաշկերոյթի ժամանակ տէրտէր նորեկ հիւրերին էլ տրամադրեն ուտելու, բայց ոչ եղբ. Սահակեանների նման, որոնք Հայրիկի օրօք 3 բ. ուտեն ճաշին 2 տակառ խիզիլալա կերան։ Այն ժամանակ տեղերից բարձրացան միայն նախագահի թւած ընդունակութիւններ ունեցողները և իբրև ռեպետիցիա բակեցին ճառերը, բայց որ իմացան թէ Վեհի ընդունելութեան ծախսը իրենց գրպանից պէտք է լինի, իսկոյն ձայները կտրեցին ու կուչ եկան. շատ հարուստներ էլ պարալիչ ընկնելով՝ պատրաստուեցին վաղն ևեթ բժշկելու համար ճանապարհել հանքային ջրերը։

Ժողովը ճարահատեալ, յանձնարարեց գործակալ Տ. Աւետիսին, Վեհի առաջ ճառ տալու համար պատրաստել երեցփոխ Բարսովին և Աղիզովին. խմեցնելով գիշերները քնելիս իւրաքանչիւրին 12-ական ձու, որ մինչև Վեհի գալը, ձայները մշակւին։

—

Երկու օր առաջ կայացած ժողովում ծխակ. դպրոցի ուսուցիչները յանկարծ ուշաթափւելով, ժողովականների անդորրութիւնը խանգարեցին։

Պարզւեց որ նրանց ռոճիկները երեք ամիս է չէ վճարել երեց. Աղիզեանը և այդ պատճառով խեղճերը շատ քաղցած մնալուց՝ ուժասպառ են եղել ու ժողովում երկար կանգնելով, ոտների հաւասարակշռութիւնը կորցրել ու գետին են թափւել։

Այդ առթիւ երեց. Աղիզեանը ժողովին յայտնեց, որ «համաձայն օրացոյցում երազացոյցի բաժնի մէջ տպած «ինչ նշանակէ բիւջէս և ուսուցիչներս» նրանց մինչև ապրիլ կերակրել եմ բ ի ւ ջ է ո վ, իսկ ապրիլից մինչև յունիս, Գանձակի օդը այնքան է թարմանում և ուժեղանում, որ սրանց նման 2000 ուսուցիչների էլ բաւական է, իսկ յունիսից, փառք Աստուծոյ Գանձակի թութը և գիլասը հասնում են, որով կարող են մինչև սեպտեմբեր եօլա գնալ»։

Այս առթիւ ծոցից հանեց օրացոյցը, որից յայտնեց, որ նա կարդալ չիմանալու պատճառով, եկեղեցու կանոնադրութեան տեղ, օրացոյցն է գործ ածում։ Այդ երազացոյցի բաժնում բիւջէ խօսքը չգտնելով բիւջէի ցաւով բռնւում է ու խելքահան լինում։

Ժողովը որոշեց 25 րուբլի տուգանքի ենթարկել նրանց, որոնք այսուհետև օրացոյցներում, երազացոյցի բաժնի մէջ չեն մտցնել բիւջէ խօսքերը, իսկ երեց. Աղիզեանին՝ բժշկելու համար համաձայն ժողովում ներկայ եղող բժշկապետ Տէր Գրիգորեանի, օրական երեք անգամ ցուրտ վաննա նստեցնել, բարդելով բոլոր ծախսերը օրացոյցներ կազմողների վրայ։

Սա.-սեկրետար Մոծակ

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

## ԻՄ ՃԱՌԸ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Գասպար ջան։

Մի շատ սիրեօղնի խորհուրդ եմ կայացրել, ի հարկէ ինքս ինձ հետ և մտքումս դրել եմ, որ վեհափառը Երեւան հասնի թէ չէ, հէնց Զանգուի կարմունջը առաջը բռնեմ և մի զօրբա ճառ կարդամ։ Ճառն արդէն գրած հազիր ա. ուզում եմ մի կարդամ, անկաճ արա։

ՎԵՀԱՓԱՌ ՋԱՆ,

Ստամպօլից Պետրբպօլից, ընչըւու էջմիածին, հազար վեց հարիր ճառ կարդացին մեր հայերը քո առաջ։ Էս ճառերը թոմմա էլ զօրբա գրւած էին. իսկը որ հայի ճառեր էին. խիստ ճռճռան, խիստ բէդ-բէդ, ու ամէնքն էլ էն միտքն էին յայտնում, որ թոմմա մեր հայերը, աչքները ճամփից ճլզացրած, սպասում են քո գալուն. ու որ էջմիածին հասար թէ չէ, էնա հա զաւազանի մի հարւածով ամէն բան պէտքա փոխես։

Հայոց ազգի խասիաթը, որ շատ խօսալ գիտան ու ոչինչ չշինել. որ առանց կա-

ղէկը Ջիրից հանելու, ուրիշի հաշւով մեծ մեծ գործեր անել գիտեն, շինածը քանդել, իսկ քանդածը էնտ հօ ուրիշի շէնօտից պահանջել, էս խասիաթը իսկոյն ևեթ կփոխուի։

Էջմիածնայ վանքի մուֆթախոռ ու անբան միաբանութիւնը էն սահաթին կփոխուի, կուսպար, բամբասանքչի, իրար որոգայթ լարելու, ոտնատակ քանդելու խասիաթը կը վերանայ. թոմա էլ կդառնան Մխիթարեան վանքի վարդապետներն ու մեղրի ճանճի դայրա կսկսեն ազգին ու եկեղեցուն ծառայել։

Հայոց ճեմարանի համար երկնքից դասատուներ վեր կբերեն, էդ դասատուներով համ քար ու քանդ էլած վանքը իրան սեղանատունով կվերանորոգեն, համ ճեմարանը կապահովացնեն, համ Վաղարշապատը կշէնացնեն, ջուր կհանեն, համ Կանայեանցին տեսուչ կշինեն՝ համ Բերբերեանցին, ու համ էլ թոմա վարժապետներին։ Դրանց թոմէքին իրար հետ իրանց աշակերտներով, կաթն ու կարակ կշինեն, հէնց թէ կուզ ամեն տեղ։

Սօցիալիստներին կղերական, կղերականներին աշխարհական, աշխարհականներին իսկական և դուռս հայեր։

Ու էս իսկական հայերի համար նաղդ 35 միլիոն կհամբարեն սուլթան Մահամէդի առաջ ու ոնց որ Կրեաէն ծախում են, Հայաստանն էլ կառնեն, ու ընդեղ մի քանի հայոց թագաւորներ կդնեն. Այսինքն ամեն կուսակցութիւններից մէկ մէկ հատ։ Էս թաւուր որ չլինի, բանը գլուխ չի գալ ու իրար միս կուտեն դրանք։

Դիփ պիանից ոէրոէրները խմելու թարգը կտան, կաշառակերները, փաշխառուները կազնուանան, անգրագէտները փիլիսոփայ կդառնան և այլն և այլն և այլն։

Էս ամենից էրեւում, որ Վեհափառ ջան, Դու երկնային մի զօրութիւն ունես, գաւազանդ հենց թափ տաս թէ չէ, համ մշականի կամքը կ՝կատարուի, համ գործականների, համ հոգեւականների, համ զօրքայի, համ նեղեալների, համ էլ թոմա հայերի։ Ըսենց որ չլնի, ես իմ Աստուածը բանըդ բուրթա։

Ու չուզի որ էտպէս ա, խաթերս համար հենց էս կարթնջումը գաւազանդ շարժիր, տաս եզիցի, և ահա կլինի։

Կլինի, որ մեր էրեւանի կարմունջը կշինուի, որ վրովն անցկենաս. մեր քաղաքագլուխը կքաշի Միրզոյովի հետ, մեր ջուրը կգայ։ Մեր էրեւանու խիստ կոտր ընկած առուտուրը կտարանայ, դիփ վէքսիլները կվճարուի։

Մեր Ուզբուէն խեյքի կգայ և մեզ գըլխացաւանքութիւնից կազատի։

Մեր թեմականի հոգաբարձուները թայֆայականութիւնը կթողնեն։ Մեր թեմական ուսումնարանի, անտառ... հա ներողութիւն, տեսուչ Աղամալովի ընդունած հրաժարականը նորից կմերժուի և նորից կհրաւիրուի, չուզի հեզգը շատ փոշմանել ա, որ հրաժարական ա տուել. ինքը մեղաւոր չի, խաբել են։

Մեր առաջնորդ Համայեակ վարդապետը տանը կնստի և կանդատօրի գործերը կթամուղի։ Մեր գեղացիք համ հող կստանան, համ ջուր։

Մեր ուսումնարաններից թայֆայականութիւնը կվերջանայ, ինքն իրան կկանոնաւորուի։ Մեր թաղայ եկեղեցու երեցփոխը ոէրոէրների հեդ կքաշի։ Մեր Նորքա էրկու ոէրոէրները իրար եախա պատռելուց ձեռ կվերնեն. մեր բուլւարում ամեն օր մուզիկ կածուի, ոխեն, միսը ու հացը կէժանանայ. քաղաքը կը մաքրուի կեղտոտութիւններից, եղանակը կհովանայ, մեր կնանիք ու ջահէլները խիստ լաւ խասիաթի կլինեն, տները կէժանանայ. պատուածները կնշանուեն և այլն և այլն։ Էս բաները, մի խօսքով դիփ սպասում են մեր հայերը։

Հը, ոնց ա, Գասպար ջան. կարգամ թէ չէ ։*)

Փալանճուզ Մկօ

ՕՐ. ՈՋ-ՄԻԾ-ԱՆԱՄԽԱՆՑԻՆ

Իզուր ես աշխատում՝
Սրտեր որսալ խնջոյքում.
Քո այդ մատաղ հասակում,
Տէրտէրը չի՞ պրսակում.

Լիլիպուտ

*) Կարթա, մա՛շ, կարթա, լեզուն խօ օսկոր չունի վար դաշլա անէ, մէ մէկը ընենց բան է կարթում ու տալիս, կասես աշխարքի տերը ինքը ըլի. փառք Աստծու դուն խօ նրանցից չես։

# ՖԷԼԻԷՏՕՆ

## ՄԻՆԱՍ ՋԵՐԱՂԻ ՄՕՏ

Աստուած կինք տայ մեր Վեհափառ Կաթողիկոսին, ինքը խօ չնուխք արից, հիդն էլ բերել է մեր պատւական բարեկամ պարոն էֆէնդի Մինաս Ջերաղին։

Հազար թումանն վուր բախշել էին ինձ, էնենց չէի ուրախանայ, վունց վուր Ջերաղին տեսնելով ուրախացայ։

Գուզէք իմանայ, թէ էն վնենց էլաւ, վուր Օսմանլուի աշխարքումը սուլթաններուն էնենց ին փոխում, վունց վուր մինք փոխնորթնիկը։ Շնուրակալ իմ, սուսայ դրամէն, ուրիշ բանիր էլ պատմից։

—Իս քու հորուն մեռնիմ, ասի Ջերաղ ջան, վուր դուն միզ չմոռացար ասի, ու էլի չնուխք բերիր մեր պիտլած Թիֆլիզ ասի։

—Անանկ անադուհաց մարդ չեմ, կոռէ, որ Թիֆլիզ և Կովկաս մոռնայ կարենամ, կօսէ։

—Այ Աստուած քիզ կինք տայ ասի, վուր օրինաւոր իս խօսում, ասի։

—Ջանմ, մօտիկ ապադային, այսինքն Վեհափառին օծման անմիջապէս առաջ մը ալ կու գամ, կօսէ։

—Էսա էլ լաւ կօնիս, սէկտեմբերին միզ մօտ խիստ լաւ է ասի։

—Դուն, Գասպար, ինչպէս ես, կօսէ, ազգային գործերը հոս...

—Իս վուր լաւ իմ, հալբաթտա ազկի գուրծիրն էլ լաւ կուլին ասի։

—Աղէկ է, կօսէ։

—Ջերաղ ջան, էն գուրթ էլաւ ասի, վուր սուլթան Աբդուլ Համիդին թախտեմէն գիվիր գցեցիք։

—Անանկ է, անոր գահազուրկ ըրինք, կօսէ։

—Իժում էտ ինչի Է։

—Անիկա գէշ մարդ մը էր, Աստծոյն պատկեր չէր կըէր իր դէմքին վրայ, խիղճ ըսած բանը բնաւ չունէր, կօսէ, հայերուս և առհասարակ քրիստոնէից անչափ կատէր կօսէ։

—Վա, դուրթ իս ասում, ասի։

—Հէլբաթտա, կօսէ։

—Իժում չաւիր չմոզոնից, ասի։

—Հէլբաթտա։ կօսէ։

—Ի՞նչ մուստաֆն է էլի, տօ, ասի. հիմիկւայ նուր սուլթան Մամէդը վնենց մարթ է, ասի, ան ում թայիր է։

—Մամէդ Հինգերորդը աղէկ անձ մը է, կատարեալ հայ լուսաւորչականի կնմանէ կոր, կօսէ։

—Էդ լաւ է էլի, ասի։

—Գէշ չէ, կօսէ։

—Կիլիկիումը էդ ինչի՞ր է էլի ասի ու դուք էլ վնենց դարձուլ կացաք, վուր էդդքամ հայիր կոտորին ու ձէն չիք հանում, ասի։

—Ոէլակսիօն ուժերը վերջին ճիգմը ուզեցին թափել և հայ արիւնով կուզէին նոր ի նորոյ ամրացնել Աբդուլ Համիդին գահն ու ուրը, կօսէ։ Անոր համար էլ, ամեն գաղտամիջոց գործ դրին, որպէսզի ոչ միայն Ադանա այլև Պօլիս և այլ ուր ուր հայ կայ, հոդին հետ հաւասարեցնեն, կօսէ, սակայն փառք Ամենակալին, ատ անգամ քանի հազար զոհէն աւել տուած չենք, կօսէ, իսկ գոյքերնուս վնասը քանի մը միլիոններու արժէք ունէ, կօսէ։

—Իժում ձիզ մօտ մաշ քրիստոնէ թաքաւորութիններ չկէին, նրանք ինչի չէին հասնում, ասի։

—Անոնք իրենք սատկած էշ կփնտրեն, որ պայտերը հանեն ու իրենք օգտուին, կօսէ։

—Վա՜, դուրթ իս ասում, ասի։

—Հէլբաթտա, կօսէ։

—Ջատկին վուր Ստամբօլումը բունթ կէր, դուրթ է վուր հայերը Աբդուլ-Համիդի մարթկերանց հիդ միացան, ասի։

—Անանկ չէ, սակայն և այլապէս ալ չէ. կօսէ։ Թիւրքիա կայ, բացի իթթիհատական կուսակցութենէ, որ երիտասարդ Թիւրքեր կուին, այլ և ահրարական կուսակցութիւն մը, որուն գլուխն է ազնիւ իշխան Սաբահէդդին էֆէնդին, կօսէ, սուլթանին քեռորդին, կօսէ։ Ատ կուսակցութեան կէտ նպա-

## ՍԻՐՈՅ ՄԵՂԵԴԻՆ

—Եւ այդ խօսքերը… օ, հանգիստ թողէք
Այրեկած հոգիս, ձեզ չեմ հաւատում.
Դուք, ինչ որ նոր բան, նոր երգ էք երգում,
Որ ես չեմ լսել իմ ամբողջ կեանքում։
Օ՛ ոչ, խօսեցէք… այրեկած հոգիս
Թող նորից յուզւի, դառնայ փոթորիկ…
Ո՛ւհ, այն խօսքերը ինչ մօտ են սրտիս,
Խօսեցէք, օ ոչ, հերիք է, հերի՛ք։
Ինչ որ յիշում եմ, ցնորք թէ երազ՝
Ես այդ չգիտեմ, միայն գեփիւռը
Մի նուրբ թռիչքով երբ գգւեց վարդին,
Խօսքեր շշնջաց նրան կամացուկ,
Եւ ես լսեցի…
Համեստ էր վարդը, ինչպէս մի շուշան,
Սգխանձ ու հեզ. բայց երբ գեփիւռը
Համբուրեց նրան, նա դարձաւ կարմիր,
Ամօթից կարմրեց…
Եւ փախչում եմ ես ձեր խօսքերից,
Որոնց նմանը գեփիւռը պատմեց
Ամօթխած վարդին…
Օ՛, ոչ, խօսեցէք,
Այրեկած հոգիս թող նորից յուզւի,
Դառնայ փոթորիկ… և արցունքները
Թող իմ աչքերում յուզւին, ինչպէս ծով…
Եւ ձեր համբոյրը… օ, ձեր համբոյրը
Ցնցում է հոգիս, սիրտս է հրդեհում։
Ամօթխած վարդը…
…Մեղմիկ գեփիւռը…
Ի՞նչ ասացիք… ա՜ք…
—Սիրում եմ, սիրո՜ւմ…

Սիմէօն Բազէն

## ԵԿԶԱՄԻՆԸ ԹԸԹՈՒ ԴՐԻՆ

Նամակ Ղարսից

Խնամի «Խաթաբալա»

Դուն խելօք մարդ ես, գիտնաս կը։ Ասինչի՞ն է, որ ըխթուն վարժատները եկզամին կ'ընեն կը, յետև վարժատունը կոգօրին կը, համը մեր Ղարսի հայոց վարժարանները եկզամինը թըթու դրին. հոգաբարձու մագարարցու, իշխանութեն միշխանութեն, ժողովուրդ մողովուրդ, օրէնք մօրէնք… ըխթո՛ւն, ըխթո՛ւն ջուրը դրին, առանց եկզամինի յաշկերտներուն ցրւեցին։ Սուտ է— զօրդ է չեմ գիտեր, ասա վարժապետներն կըսին թէ, եկզամինը պէչ բան է, յաշկերտները հիւընդնան կը, եկզամինի վախթը ըինդան ըիյա խելքերը անցնի կը, ցու փէյտայ կենին, շատերն ալ մեռնին կը։ Ասոր ես ալ ուտրնամ կը, չունքի մեր Ղարսի յաշկերտներն ալ շատ նեժնի մարտնի են, նաբին—մարին վենծըցեր են, Փարիզից նոր են էկեր, հըպատ եկզամինին չեն դիմանայ, խելքերը անցնի կը, տեղա տեղ մեռնին կը։ Ջանըմ, չեմ գիտեր ինչ ըսեմ, ախր մեր չաթուրխատանները սարսախանէ ակյմօր յերիկուն ուլիցները չափչփեն կը, իրար գլուխ ջարդեն կը. օրը հինգ հեղ հարբը թիմարէ կէ, քանիմ հեղ մարը, վարժատան մէջ կերած քեօթակներն ալ քեզի փեշքեաշ։ Ասրան եղոտ քեօթակների մէջ յաշկերտի խելքը չի անցնի, չի մեռնի, հյա մէ թարաֆէն ալ ռեկանները դայիմեան կը. համը որ եկզամին ընեն ու հարցնեն թէ, «10 փ. պանրից 4 փ. պանիրը պրիստաւի մահլան ուշաթ տարայ. 3 փ. վենծ ապայի տունը ղրկեցի, մացածը բժշկին փեշքեաշ ղրկեցի, դէ, իմացիր, բժշկին քանի՞ փութ ղրկեցի»։ Ասպէս բաներ հարցնես թէ չէ, յաշկերտի խելքը անցնի կը։ 40 տարի է դալայչութեն կ'ընեմ կը, յամեն վախթ ալ եկզամիններին գնացեր եմ. հէչ չեմ տեսեր որ, մէկի խելքը անցնի։

Օդորդ է եկզամին չըրին, համը՝ պատերին թուղթ էին կոցրեր ու գրեր էին թէ, վեց օր ուղէ կը, թող գալ տեսնի վարժապետները ինչդ դաս կուտան կը։ Ես ալ ժանգռամներս յաշկերտներու ուսումին թագի, վազեցի վարժատուն։ Ասաջը կարեցին չթողին կլաս մտնէի, չիլլի կ'ըսին կը, յուշացիր ես, դասը խանգարիս կը, դանդէն յառաջ պիտի գայիր։ Ջանըմ, գեօզըմ, թողէք, նեա էրթամ, ասիկ մեկեզնի դարօղ խոմ չէ, որ դանգից յառաջ բիլեթ առնինք, յետև վազոն մտնինք։ Է՛, յո՛ւմ կ'ըսեմ կը, առտանի ձին մէ քեարայ հարիֆները հեծեր են, ալ ինչ կիճնեն օր։ Զարան ինչ, դուռը պատին տակը հրնկօրներիս հետ ծախու կեռնաններու պէս շարւեցինք, բարկայեցինք, ակյմօր դասը վերջացաւ։ Բիշմ զինջացան, գենայ դանդը զարգեցին, յուզեցի ըիթունից յառաջ կլաս մտնիմ. հիմի ալ պատին կրպցրած թուղթմ պուպուզ յառաջս դրին։ Աս թղթին մէջն ալ գրած էր որ, «Ներս մտնո-

---

տակը ապակենտրոնացում է, կօսէ։

—Էդ ինչ բան է, սար, ապակենտրոնացումը ուտելու բան է՞, սար։

—Ոչ, ադ աւտօնոմիա է, կօսէ։

—Ղուրթ խո ասո՞ւմ, սար,

—Հէյրաթտա, կօսէ։ Ադ Սարաճէղզինին կուսակցութեան մէջ վերջերս շատ անպատկառ և դաւաճան մարդիկ մտեր են, կօսէ, որոնք Արդիւլ-Համիդէն դեղին ոսկի առանալով, ջանացեր են սահմանադրութեան դէմ դաւադրութիւն յաջողեցնել։

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, էս էլ ղուրթ խո ասո՞ւմ, սար։

—Հէյրաթտա, էֆէնդիմ կօսէ։

—Իժում, իժում էլ ինչ բանիր էլաւ, սար։

—Եթէ Սալօնիկի բանակը քանի մը ժամ ալ ուշանար, ալ ամէնը լմնցած էր. ասիթը չպիտի ունենայինք այլեւս գիւրար տեսնելու։

—Լաւ յիշեցրիր, սար, էն Վարդգէսն ու Զօհրապը ղուրթ գնացին Սալօնիկ, Սուլթանի համար խնդրելու Նիազի բէյի և Շէվքէթ փաշի ղօշունին։

—Կանն որ, գնացեր են, կօսէ։

—Իժում վո՞ւնց չէին ամանչում։

—Անոնք լոկ խարէբայութեանց զոհ պիտի ըլլային, կօսէ, հայերս միշտ խաբւող ենք, երբ Սարաճէղզինի կուսակցականների թ իւր կատարանայ-հայերս ալ ան կողմը յարեցինք և պահ մը մեր «փիկիչները» կարծեցին, թէ ալ ուխտը կրնանք ստանալ, եթէ խոջաներու, ուլէմաներու և ասոնց նման դաղաններու հետ գործելու ըլլանք, կօսէ։

—Հիմիկ սուլթան Արդիւլ-Համիդը որդի ա, խօ չեն սպանել ու սուտ չեն ասում, թէ ապրում է։

—Անոր կեանքը թուրքացիներու համար նոյնչափ թանգ է, որչափ սահմանադրութեան գոյութիւնը, կօսէ։

—Ինչի՞, սար։

—Վասն զի մոլեռանդ խուժանը անոր անունին կապուած, եթէ ուժեղ կամքի տէր մէկը ելլէ և դրօշ մը ծածանէ, շարիաթ ու մարգարէ գոչէ, երկիրը հիմնայատակ կարող է ընել։

—Վա՜հ, վա՜հ, վա՜հ, էս ինչիր իբ պատմում, պարուն Զերապ, ան դանա էսունք գիտ ղուրթ է՞. սար։

—Հէյրաթտա, կօսէ։

—Ասկի դուրծիրը վո՞ւնց ին, սար։

—Անանկ, որպէս կարէ ըլլալ հայ ազգի գործերը, խախղրանէ մինչև մեր օրերը, կօսէ

—Էն դո՞ւրթ է, վուր Երուսաղէմի վանքը ու պատրիարքըն էլ հիդը ծախելու էիք, սար։

—Անկարելի բան չկայ, կօսէ, սակայն և այդ մասդրութիւնը լրջօրէն չէ եղեր, կօսէ. ասնկ, բախտախնդիրներն մէկը, իր համախոհներով կուզեն ամէն մի սրբութիւն վաճառել, վասն զի իրենք ամէն ամօթ ու պատկառանք վաղուց վաճառած, ալ բան չէ մացած իրենց, կօսէ։

Ուստի, որպէսզի տեսն մը միջոց ունենան դարչելի ցլաիննին պահելու, կօսէ, ստանկ ատաջարկութիւններ կ'նեն, բայց դա ըլլալու բան չէ՞, կօսէ։

—Ղուրթ խօ ասո՞ւմ, սար։

—Հէյրէթտա, կօսէ։

—Օրմանեանին տեհի՞լ է՞ք, սար, վո՞ւնց է, ղո՞ւրվ դամբլան նըննդաւ, սար։

—Անձամբ չեմ տեսեր, վասն զի, որպէս տանտապետ ազգային ժողովի, չէի ցանկար կասկածներ ծագեցնել անոր, կամ իմ վերաբերեալ, կօսէ։

—Ի՞նչ էր կարծում, կո՞ւյի ըլի, վուր նա ասկի փողերը կերած ըլի, սար։

—Օրմանեանը հաշիւ ներկայացուցեր է, այժմ Ազգային Ժողովը քննութիւն կ'ընէ, բայց ազգէն և «փիկիչներէն» անպայման վերաւորուած է արդէն, կօսէ։

—Թէ քու մամի հօրին կու սիրես, սար։

—Անպայման կախէլ, կօսէ։

—Մեր երեսփոխանները վո՞ւնց են, սար, Ակնունին խօ յաւ է, Կաթողիկոսին տեհա՞ւ, սար։

—Անոնք պէչ չեն, Ակնունին ալ ձեզի բարևներ բրաւ, կօսէ։ Կաթողիկոսին և այն տեսն, երբ իրեն ընտրեցինք և այս տեսն երբ Փոլէն մեկնեցանք, ընդհանրապէս անանք և մասնաւորապէս Ակնունին տեսան, կօսէ։

—Է՜հ, իժում ինչ ասեմ, ա՜ւ էն չափը,

դը էլ իրաւունք չունի կլասից դուրս գա-լու, ամէնօր դասը վերջանալ, չունքի դասը խանգարի կը։ Ընել դուրս կլասի մէջ մե-ակ պիտի դառնամ, ժամ չպիտի գամ, չը պիտի հաղամ, չփոշտամ, թէ օր յանդէր լուն մէ տեղս խածեց, իրաւունք չունիմ վռնդելու։ Առ բէթուն լաւ, եօլա տանինք, չհազանք, ժամ չգանք, հայր թէ օր բէնդան թիրայ սանջուս բնից, ան վախթը դէ արի էշը չամուէն հանէ տեսնիմ. ինչը պիտի հանես։ Չէ, աղբար, ես կլասի մէջ խայ-տառակելու իշտան չունիմ, բսի ու քոռ ու փոշման գնացի խանութ։

Դալալչի Մարգար

---

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏԻՐԱԿՆԵՐԸ

*(Նորագոյն կեանքից)*

Պոլսից վերադառնալիս, Ղարաբաղի առաջ-նորդ Աշոտ եպիսկոպոսը, ծովի վերայ տեսնելով լրացած լուսինը, հիանում ու զարմանում է։ (Ծովի վերայ լուսինը աւելի մեծ և փառահեղ է երեւում։)

Դիմում է սինօդական Մեսրոպ վարդա-պետին.

—Հայր սուրբ, տես տես, ինչ մեծ է ե-րեւում լուսինը. հիմայ մեզանում, Ղարաբա-ղում մի քանի սաժէն աւելի բարձր կլինի կանգնած, բանց թէ այս տեղից ենք տես-նում, էնպէս չէ՞։

Մեսրոպը հանարով պատասխանում է։

—Դէ էն ուրիշ լուսին է, էս ուրիշ, մէկը ցամաքային է, միւսը ծովային, կան և ու-րիշ լուսիններ։

Սրբազանը լռում է։ Մի քանի բոպէից յե-տոյ տախտակամածի վերայ հանդիպում է Երուսաղէմի միաբան և Վեհափառին ուղեկ-ցող միւս Մեսրոպ վարդապետին ու հար-ցնում.

—Մեսրոպ հայր սուրբ, ձեզանում, Երու-սաղէմում, ո՞ր լուսինն է երեւում, ծովայի՞ն, թէ ցամաքայի՞ն։

Մեսրոպը մնում է շւարած։

—

Պետերբուրգից Մոսկւա գնացող ճանա-պարհի վերայ հրաշալի վերջալոյսներ են լինում, մանաւանդ մայիսի վերջերին։

Վեհափառի սալոն—վագոնից այդ բանը յանկարծ տեսնում է Աշոտ սրբազանը և ուրախացած ու զարմացած դիմում է Վեհին.

—Վեհափառ Տէր, Վեհափառ Տէր, տեսէք ինչ սիրուն հիւսիսափայլ է։

—Արեւմտեան կողմը հիւսիսափայլ չի լի-նում. պատասխանում է Վեհը։

—

Պետերբուրգի պալատում եղած միջոցին, Աշոտ եպիսկոպոսին հարցնում են, ո՞ր թե-մի առաջնորդ է,

—Արցախի, պատասխանում է սրբա-զանը.

—Ա գդէ Արցախ—ըֆ Դագեստանէ(իսկ Ար-ցախը որտեղ է Դաղստանում) կրկնում են հարցնողները,

—Օկօլօ (մօտիկ) պատասխանում է արհին։

Երբ հարցնում են Աշոտ սրբազանին, թէ ինչի ռուսերէն չգիտէ. պատասխանում է.

—Պրակտիկա նէտ։

—

Նոյն պալատում մէկը հարցնում է Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիոյ թեմակալ Ներ-սէս արքեպիսկոպոսին, թէ արհին քանի նահանգների թեմակալ է։

Սրբազանն սկսում է մատների վերայ համարել

—Քիշինեւ տարին, Օտես դւա, Խերսոն տրի, Կիեւ չըրի, Ղրիմ պիատ, Ռոստով-Նա-խիչեւան շեստ, Մոսկւա...

---

## ՍՏՐԿԱՑԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Ես ծիծաղում եմ դժողքի միջից
Իմ ժանտ գիւտական անեղ քրքիջով.
Դաժան հայեացքը իմ բոց աչքերից,
Մահ է տարածում սոսկալի թափով,

Եւ արդարութիւնն լուռ ու անշշուկ,
Ծունկի է եկած իմ ոյժիս առաջ.
Նա սպասում է ինչպէս մի ստրուկ,
Երբ իմ հաճոյքն է նորան մօտ կանչած։

Գնա, ասացի դու անպէտք փալաս,
Արդէն կշտացար ոտքս լիզելով,
Այսօր դու նորից ինձ պէտք պիտի գաս՝
Երբ ինձ պիտ ծածկես քո կեղծ դիմակով։

Գնա այն դաշտը, ուր ածիրները,
Ուր գետ ու ծաղկունք արնով են ներկւած,
Ուր այլանդակւած բիւր դիակները
Շուրջը մարդկային գազանն է կանգնած։

Այդ դիակները աղեխարշ ձայնով
Երկինք հասցրին իրենց վայնասուն,
Պէտք չէ, որ նրանք քո ցուցանակով,
Դատաստան խնդրեն բարձրեալ Աստծուն։

Գնա իմ հլու արբանեակներին,
Զարդարիր փայլուն, քո դրօշակով,
Եւ յայտարարիր, ամբողջ աշխարհին,
Որ արդարութիւնն իմն է անխռով։

Եւ գնաց վախկոտ, այդ մեծ ստրուկը,
Նորից յանցաւորն արդար հռչակեց,
Եւ անմեղ զոհի, դառն հեծկլտուկը,
Ցանցանքի ծանր շղթայով խեղդեց։

Մուշ. Բագրատունի

---

## Լ Օ Թ Ի

Ես մաքումս դրել եմ, բօրւանից յետը «Խաթաբալումը» գրեմ ու ալամ աշխարհին շանց տամ, թէ մեզ մօտ էլ ինչ անիրաւու-թիններ ա կատարւում, թէ մեր խալխն էլ ինչ նեղ օր ա քաշում, մեր մի քանի աղե-նոնց ձեռին։

---

ան հիմի։ Ջինն ուզում վուր եկեղեցին մօշ-կա անինք, ասի։

—Առաջին նւազ անոնք իրենց վեր բբին, քսին՝ Վեհափառ, երբ գնալու ըլլաք Էջ-միածին եւ պաշտօննին կատարելու դըժ-ւար պարագային, ինչ ուզելու ըլլաք, դի-մեցէք մեզ, մենք ձեզ կօգնենք, քսին։ Ինչով եւ երբ հարկ ըլլայ։ Պօլսէն մէկնու-մի առեն, նոյն Ակնունին «Ջիխաչով» նա-ւին վրայ իր ընկերներով եկան և ոտնա-լիզութեամբ խնդրեցին, արտասւեցին, ա-ղաչեցին, պաղատեցին, որ Վեհափառը բիւ-րօկրատիայից ողորմութիւն հայցէ մեղմե-լու դէպ հայ յեղափոխականները, իբ յարու-ցած հալածանքը կօսէ։

—Վա՛հ, վա՛հ, վա՛հ, էդ ինչի՞ր իք ասում, վո՞ւնց թէ աղաչանք, պաղատանք, դուրթ իք ասում, ասի։

—Հաւատացէք խօսքիս, կօսէ։

—Իժում դուք ինչ ասիք, ասի։

—Ես բան մը չըսի, կօսէ։

—Մաշ նրանք ինչ ասին, ասի։

—Հէչ, անոնք ալ բան չըսին, կօսէ։

—Բաս չկարմրեցա՞ն, ասի։

—Է՜հ, կարմրելու տեղ մնացե՞ր է, կօսէ։

—Պետրբուրգ ու Ռուսէթ հասանեցանք ասի, մեր մինձ Թաքաւորին, մեր դոշախ Ստօլիպինին տեհանք, բան չասի՞ք, ասի։

—Է՜հ, բարեկամ. դուք տակաւին աղաւ-նու չափ միամիտ էք, կօսէ, հայ փօլէտի-կօսները ինձի թողին նէ՛, որ վեհարանէն դուրս եկեմ, Կայսեր կամ Ստօլիպինին, որն անգամ հարցուցեր էր իւ մասին, տես-նէի, կօսէ։

—Վո՞ւնց թէ հայ պօլէտիկանիրը, ասի։

—Անանկ փօլէտիկաներ, կօսէ։

—Մաշ մեր պօլիտիկանիրը փուկուցնի-կութին են արի, ասի։

—Կերեւնայ թէ, կօսէ։

Իժում էլի շատ բաներու վրէն խօսեցինք էնդունք ձիզ չիմ ասի, չունքի շատ էլ գլխներումդ բան չի մանի, էս մէկ, ու վրայ էրկուսն էլ էն վուր, շատ վուր իմա-նաք, խիստ շուտ կու պառւիք, վրայ իրիքն էլ էն վուր, իմանաք չիմանաք, մէ բան վուր մէ անգամից մտնում է, մէկէլ անգամով դուս իք թողնում. վրայ չուրսը էն վուր, ձիզ համա հատ ու բարակ մէ գին ունէ ու վայ բարակ մանողին, վրայ հինգն էլ էն վուր, շատը գնացիլ է, քիչը մնացիլ է, վրայ վիցը, դրուստ ասող մարթը պիտի մէ լաւ եօրղա ձի ունենայ, ինչ գիդայ ասի, խօսի, նստի ձին, փախախը դնի կողքին ու հայդա, փախչի. վրայ օխտն էլ էն վուր՝ ասելով ուփրօ խիստ է փչանում գուրձը, քանց թէ չինւում, վրայ ութը՝ վուր ասի, ձիզմէն վո՞ւրը մասը մատին կու խփէ՝ վրայ ինն էլ էն վուր՝ ասիմ չասիմ, դուք իմ է-նենց էրեխէք չիք. վուր չիմանաք բանի զօրութինը, վրայ տասը ուրիշ վուր չի...

Է՜հ, լաւ, էլ մէք խօսեցնի, ձիր արիւ սաղաղա։

Գասպար Կալստուգեանց

Մեր երկրին ասում են Լօռի. էս օրհնածը մի էնթաւուր լաւ տեղ ա, որ մարդի խելք ա տանում։

Լօռին էս սահաթին ունի քառասուն թէ քառասուն ու երեք քեղ, ամա դրանցից ամենաարիւնը, ամենավենձը, իր բնութենովը աներովը ու դուրան բազարովը՝ Ջալալ-Օղլին ա։

Ջալալ-Օղլու խալխը խարար ա, ըհ, մեղայ Աստծու, խալխը խու չի խարար, խալխի միջին բուն դրած մի քանի գոփողներն են խարար, որ սաղ խալխին մատների ծերին դրած, պար են ածում ու մեր խալխը ձէն ծպտուն չի հանում, չունքի դրանցից կախումն ունի. ադի քէֆին դիպչիլը ո՞նց կլի, չէ՞ որ իրա սեւ օրին, էլի նա ա պէտք գալու։

Էս ադեննոց մասին էս նամակումս չեմ գրում, չունքի դրանք՝ դէ ամեն տեղ էլ կլեն, դուք էլ լաւ ճնանչելիս կլէք էդ թաւուր անփօքի մարդկանց, ամա դէ բաոնց միջին էլ էն թաւուրները կան, որ էլ համփերիլ չի ըլլի։

Մի դայցի փիս խասիաթ էլ ունի մեր խալխը, մէնը որ մի գործում ջոգւեց եա քեօխւա, եա գլաւին, եա ֆօքարարցում, էլ նրան դրանից յե՞տ կաղնացնելը կայ ո՞չ, կասենաս թէ մեղ վրայ անփեսայ ըլին էկած, եա թէ չէ, որ յեղ էլ կաղնացնում են, նրանից վենծ պաշտօն են տալիս, որ բալքամ նրանով եօլա գնա, նրանով ադրի ու իր քուլֆաթը պահի։

Սուտ եմ ասում, ա խալխ, թէ սուտ եմ ասում՝ բա քաչալ Ազօն, Միխայիլ Արտեմիչն ինչ ա, որ էս էրկու իրեք արեա ա, սուդիա ու միրօրնի էք ջոգում, եա դրանք կարում են էրկու իշի գարի ջոգիլ։ Էտ էլ չի էն, որ էրկու տարի առաջ, ինչ կուով, դալմաղալով ու դաւի դառարով խեղճ Եփրեմ վարդապետին խարեցիք ու Միխակ քեռուն իրեցփօխ ու ֆօքարարցում ջոգեցիք ու հիմի կարում չէք հանիլը գալ։

Մեր թաղայ գլաւին էլ, որ մի Աստծու քեափուր ադայ ա, կարում չի հաշիւ տանել էդ աղերոնց տակի մասխարու՞ցը։ Բա տեսնում չէ՞ք, որ մեր ադքատ եկեղեցու փողերը ուտում են ու մենք մի անգամ էլա, խալխի մէջը՝ նրա ըրեսին կարում չենք ասել, թէ խե՞ եա ուտում ժամի փողը։

Բա էն ծակ ու ծուկումը վեվենծ խօսում էք, թէ մեր ըրեցփօխնին ժամի փողով առուն էլ են պահում, հլա իրանց գործերն էլ առաջ տանո՞ւմ, ադա բա մի ծտի սիրտ էլ ա չունե՞նք, որ դուրս գանք, ու առաջնօրդին գրենք, թէ մօքրադարթում ա, բա մենք նամուս չունե՞նք, բա հէնց գիդէք առաջնօրդը ըսեփնեըիս մտիկ չի անե՞լ ու իրեցփօխութենից էլ դուս անիլ ու ֆօքարարցումից էլ։

Հիմի թէ էս գրեկովս կարացի դրանց խելքի բերե՞լ, լաւ, թէ չէ ու դրանց անունները կենդ կենդ պահեմ տալ «Խաթարալա» կուսակցութենին, որ բալքամ նա նրանց կարտիշկէքը հանի ու մեր գեղը վարդիվերան անօրէններից ազատի։

Համբօ

## ՅԱՅՏՆԻ ԽՄԲԱԳԻՐ

—Ա՜, պարոն Դերենիկ, բարե՛ւ, բարե՛ւ. ո՞րտեղ էք եղբայր, էլ չէք երեւում։

Թուաստան էի սիրելիս. բոլոր քաղաքները շրջեցի։

—Ի՞նչ գործով...

—Ինչ գործո՞վ, մի՞թէ չգիտես իմ արւեստը. խմբեր էի պատրաստում, համերգներ էի տալիս...

—Ճի՞շտ. իսկ յաջո՞ղ էր անցնում։

—Ի հարկէ եղբայր. դեռ մի քաղաքից միւսը չգնացած, թերթերում յայտարարում էին, «շուտով կը ժամանէ յայտնի խմբապետ Մ—եանը»

—Չեմ հաւատում։

—Չես հաւատո՞ւմ, տեսնո՞ւմ ես ծխախոտի այս արծաթէ տուփը. Նուիրեցին համակիրները, ահա վրան էլ գրուած է, մեր սիրելի խմբապետին»։

—Այո, գրուած է։ Իսկ դու տեսե՞լ ես իմ ձեռնափայտը։

—Ոչ...

—Օ՜, մանոգրամներով լիքն է, բոլորն էլ յայտնի գերասանուհիների ազգանուններով. օրինակ Եաւրոսկայեա, Դրուզեակինա, Վեալցէւա, Միչուրինա և այլն։

—Իսկ դու դրանց ո՞րտեղից ես ճանաչում։

—Ես դրանցից ոչ մէկի հետ էլ ծանօթ չեմ և չեմ էլ տեսել։

—Ապա ինչո՞ւ են տուել իրենց մանոգրամները։

—Նրանք չեն տուել. ես ինքս եմ շինել տուել ու կպցրել ձեռնափայտիս։

Օօխար

## ՄԵՐ ՇՈՒՐՋԸ

Հիւանդ.—Պարո՛ն բժիշկ, մեռնում եմ, ի սէր Աստուծոյ, մի ճար արէք...

Բժիշկ.—Բարեկամ, ես իմ պարտքը արդէն լրացած եմ համարում. այժմ ապա կարող էք քահանայ հրաւիրել։

—

Բժիշկ.—Ի՞նչպէս է ախորժակը։

Հիւանդ.—Շատ լաւ է, պարոն բժիշկ, միայն...

Բժիշկ (խօսքը կտրելով).—Այդ շատ լաւ նշան է. էլ ի՞նչ... միայն...

Հիւանդ (խօսքը կտրելով).—Միայն՝ մի գրօշ փող չունեմ, որ բան գնեմ...

Բժիշկ (բարկացած դուրս գնալով).—Ցիմար արարած. գրպանում մի գրօշ փող չունի՝ բժիշկ է հրաւիրում. կարծես առանց բժշկի չէր կարող սատկել...

—

Բժիշկ.—Ո՞վ է հանգուցեալը։

—Իմ զարմիկս է։

Բժիշկ.—Ինչո՞վ է հիւանդ։

—Կատաղել էր։

Բժիշկ.—Ինչպէ՞ս թէ կատաղել էր։

—Կատաղել էր էլի. կծում էր, չանկռում էր։

Բժիշկ.—Բժիշկ հրաւիրեցի՞ք։

—Ոչ. մենք առանց բժշկի էլ կարողացանք նրան միւս աշխարհն ուղարկել։

Լիլիպուտ

## ԻՄ ԿԱՅԾԸ

Ինչպէս մութ մայլ երկնակամարում
Փոքրիկ աստղիկն է նազ պլպլում.
Ինչպէս իմ խաւար լուռ մենարանում
Ծժգոյն կանթեղն է վառւում ու հանգչում․

Այնպէս էլ յոգնած, իմ տանջուած սրտում,
Յոյսի մի կայծ է միշտ անշէջ փայլում.
Նա չի մեծանում, չի բոցավառւում,
Բայց չի էլ հանգչում, այլ լուռ պլպլում.

Լեօնիդ

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Պետերբուրգ։ Մոսկւայի ուսանողին.—Ստացանք ձեր «Երկաթէ պատրիարք և տիրացու սօցիալիստներ»... յօդւածը։

Իմացանք որ Ներսիսեան դպրոցի շրջանաւարտ էլ էք եղել և ձեր տեղը կարմրեցինք. մի՞թէ այն չափ էլ հայերէն չգիտէք, որ մի երկու նախադասութեան մէջ, հարիւրաւոր սխալներ էք անում, էլ որին և ո՞ւմը ծաղրենք, երբ գլխաւոր ծաղրելուն դուք էք։ Դուք գրում էք վեհափառ՝ ը-ով իսկ վեհարան ա-ով. չլինի՞ թէ համալսարանում էլ այդպէս թարս էք սովորում։

Աշտարակ։ Յարութին. Ձեր ստանաւորը ան տան էր։

Բագու։ Ման-Սիին.—Երբ յօդւած էք ուղարկում, պատասխանը կշռել տւէք և մարկաներ էլ կպցրէք։

Գեօզալ-Ակարաջուն.—Կարդացէք վերի պատասխանը։ Գրեցէք։

Թիֆլիզ։ Մակինեակուն.—Չարժէ միւսները տպել։

Դարաչիչագ։ Զեռնաեկեանին.—

Անտառում նստում զրուցում են,
Կէս ժամ յետոյ սիրահարւում են,
Մի ժամ յետոյ բացատրւում են,
Այնուհետև համբուրւում են...
Մի օր չանցած կռւում են,
Երկրորդ օրը բաժանւում են,
Երրորդ օրը մարդ մէջ գցած,
Չորրորդ օրն էլ բարիշում են։

Լաւ են անում, տօ ձեզ ինչ է, սիրահարւում, բացատրւում թէ համբուրւում. կռւում թէ բաժանւում են, բայց վերջն էլ բարիշում են, էլ թէ կարող էք դուք էլ այդպէս վարւեցէք։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ.

ԵԳԻՊՏՈՍ

ԼՈՒՍԱԲԵՐ-ԱՐԵՒ

Լրագիր Ազգային և Քաղաքական

Շաբաթը երեք անգամ

Արտասահման 15 ֆրանք

Հասցէն՝ Loussapr—Arev B. P. 868,

Le Gaire (Epypte)




ՕՐ. ՇՈՒՇԱՆԻԿ ԽԻԹԱՐԵԱՆԸ

Ամբողջ ամառուայ ընթացքում մնալով Թիֆլիզ՝ իր սեփական տանը, որ գտնւում է Տէր-Ղուկասովսկայեա փող. № 4. յանձն է առնում պատրաստել տղական և իգական բոլոր միջնակարգ դպրոցների համար

Ընդունում է նաև գիշերօթիկներ

Անձամբ տեսնել կարելի է առ. 9—11 և եր. 5—7.




Լոյս տեսաւ և վաճառւում է

ՀԱՑԻ ԿՏՈՐ

ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ

Գրական ժողովածու Դր. Զալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ սովեալ Զէյթունցիների.

Գինն է 2 րուբլի

Գտնւում Դր. Զալխուշեանի մօտ

Ростовъ н Д. Б. Садовая № 174.



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում

ԱՆԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարմարութեան, չքնաղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ




1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Խ Ի Ն Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

ԳԻՒՂԵՐՈՒՄ






ՎԵՐԱՆՈՐՈԳՒՈՒՄ ԵՆՔ

Վեհափառ գալիս է, դուցէ մեզ էլ հաւանի և պաշտօնների նշանակէ.

## ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ



Յալանթար. Ս. Յարութիւնեանը եւ Սպանդարեանը

Սպանդար Սպանդարեան—Հա, հա, հա—հիմայ տեսէք թէ ով ինչ է. ես թէ դուք…




ԶՕՐԱՀԱՆԴԷՍ

վիմագր. Գ. Դիւստերդիկր

Նորին Վեհափառութեան գալստեան առթիւ արխիւներից դուրս են բերւում Պետրոս Սիմոնեանը, Կարապետ Կոստանեանը, Սեդրակ Մանդինեանը և Գրիգոր Նիկողոսեանը